

Ժողովուրդ

140
(2806)

6 հոկտեմբերի ուրբաթ 2023
տպագրության ԺԲ տարի

Է. Երեւան, Արմավյան 22ա/3 (0010)

+ 374 10 546423

info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

100 դրամ

ՆԻԿՈՒ ՓԱՇԻՆՅԱՆԸ ՀՐԱՋԱՆԳ Է ՏՎԵԼ

Nune Bagratyan · Follow
4d · Զ

քոչ պաշտող արցախցիներ մի բուռ հող կերեք

Серик Геворгян · Follow
4d · Զ

Ռոբին պատկանող Կոնգրես հյուրանոցն այս օրերին ոչ մի արցախցի չի ընդունել իր հարկի տակ:

Հյուրանոցից հայտնել են, որ տեղ չունեն:

Քոչարյանին պատկանող մյուս բիզնեսները նույնպես ոչ մի աջակցություն մինչ այս պահը ցույց չեն տվել Արցախից բռնի տեղահանված մեր քույրերին և եղբայրներին:

Արա... այ...
Գնա մի բուռ հող կեր,
(էդ ամենաքիչը)
խի էս ապրում:

20 տարի թալանվել ենք հալածվել ենք արտագաղթել ենք պատերազմներում զոհվել ենք զուգարաններում սպանվել ենք որ սրանք լավ ապրեն

«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ Նիկոլ Փաշինյանը նոր հրահանգ է իջեցրել թիմակիցներին: Հեռախոսային իրենց խմբում նա որոշ մտքեր է գրել, թե ինչ քարոզչություն է պետք այս օրերին շրջանառել, որպեսզի արցախցիների եւ հայաստանաբնակների զայրույթը ստեղծված իրավիճակում իրենցից հեռացնի: Ըստ այդմ, ԲՊ-ականները պետք է ֆեյքերի, ֆեյք կայքերի, անհասցե յուրաքանչյուր ակիբների, նաեւ քարոզիչների միջոցով տարածեն տեղեկություններ, որ 30 տարի արցախցիներին թալանել են Արցախի 3 նախագահները, եւ որ նրանց պետք է ունեզրկել, գումարը բաժանել արցախցիներին: Նույնիսկ Արկադի Դուկասյանի, Բակո Սահակյանի եւ Արայիկ Հարությունյանի Բաքվի բանտերից հրապարակած կադրերը հետ չի կանգնեցնում իշխանական քարոզիչներին՝ իրականացնելու այդ առաքելությունը: Շատ մարդիկ ու ֆեյքեր ուղղորդված սրտիկներ են դնում այն կադրերի տակ, որոնք Բաքվի բանտերից հրապարակում են ադրբեջանցիները: Բացի այդ, Նիկոլ Փաշինյանը ուղղորդել է իր թիմին՝ «հին երգը» երգեն, այն է՝ Ռոբերտ Քոչարյանն ու Սերժ Սարգսյանն են մեղավոր Արցախի կործանման համար, եւ հենց նրանցից պետք է պատասխանատվություն պահանջել: Եթե նրանք չհարստանային, Արցախը չէր ընկնի: Այս նարատիվները տարածվում են սոցիալական բոլոր հարթակներում բոլոր հնարավոր ձեւերով, որպեսզի արցախցիների մեջ առկա արմատական տրամադրությունները փոխվեն, եւ որեւէ մեկը փողոց դուրս չգա եւ Նիկոլ Փաշինյանին պահանջներ չենրկայացնի:

Նիկոլ Փաշինյանի քաղաքական իշխանությունը նախօրեին անակնկալի է եկել ՀՀ պաշտպանության նախկին նախարար Արշակ Կարապետյանի ներկայացրած քաղաքական հայտից: Նրանք Արշակ Կարապետյանի թեման համարում էին փակված եւ արդեն չէին էլ հիշում, որ հերթական նախարարներից մեկին անակնկալ պաշտոնակալ անելուց հետո, հնարավոր է, ինչ-որ իրադարձություններ գծագրվեն: «Ժողովուրդ» օրաթերթի իրագեյ աղբյուրները հայտնում են, որ Նիկոլ Փաշինյանը հրատապ գրույց է ունեցել ՌԴ-ում ՀՀ դեսպան, պաշտպանության նախկին նախարար Վաղարշակ Հարությունյանի հետ՝ նրանից պահանջելով հստակ պարզել, թե Արշակ Կարապետյանը ՌԴ-ում ում հովանավորությունն է վայելում, ինչ ծրագիր է գծագրված Կարապետյանի մասով, ու ինչ է հնարավոր սպասել: Բանն այն է՝ Արշակ Կարապետյանը հստակ մեղադրանքներ հնչեցրեց Նիկոլ Փաշինյանի հասցեին՝ ասելով, որ ինքը չի ենթարկվել Փաշինյանի «չկրակել» հրամանին եւ թշնամու հարձակումների ժամանակ կոշտ պատասխան կրակի հրահանգ է տվել, որից հետո անակնկալ իրեն պաշտոնակալ է արել Փաշինյանը: Իհարկե, չի բացառվում, որ ամեն ինչ այդպես էլ եղել է, քանի որ Նիկոլ Փաշինյանի թիմակիցները երեկ՝ ԱԺ բրիֆինգների ժամանակ, չկարողացան հստակ հերքել Կարապետյանի փաստարկները: Փաշինյանն էլ դեռ չի հերքել: Տարակուսելի է, սակայն, որ նախկին իշխանությունների օրոք ՊՆ-ում տարբեր պաշտոններ զբաղեցրած Կարապետյանը մինչ այս ոչինչ չէր խոսում: Հարկ ենք համարում տեղեկացնել, որ նա այն մարդն է եղել, որը Նիկոլ Փաշինյանի հեղափոխական իշխանության համար ուղիներ է բացել դեպի ՌԴ ռազմաքաղաքական էլիտա՝ ռուսներին համոզելով, որ Փաշինյանն ու թիմակիցները «սորոսական չեն», ինչպես կասկածում էին ռուսները, եւ արժե աշխատել երիտասարդ հեղափոխականների հետ: Հիմա հենց ինքն է դուրս եկել Փաշինյանի իշխանության դեմ:



Արցախի քննչական կոմիտեն տեղափոխվել է Հայաստան ու քննում է բենզինի պահեստում տեղի ունեցած պայթյունի դեպքը: «Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ չի բացառվում, որ քրեական գործը առաջիկայում տեղափոխվի ՀՀ քննչական կոմիտեի վարույթ: Ըստ նախնական տեղեկությունների՝ քաղաքացիները բենզինի տարաները լցրել ու բաժանել են միմյանց, ինչի ընթացքում բենզինը թափվել է հատակին: Վարկած կա՝ մի քաղաքացի ծխախոտը գցել է հատակին, ինչի հետեանքով պայթյուն է եղել: Նշենք, որ Արցախում տեղի ունեցած պայթյունի հետեանքով պաշտոնապես տուժել է 290 մարդ: Հարյուրավոր զոհեր, որոնց վիճակագրությունն այլեւս չի վարվում... Տուժողներին հաշվող չկա Արցախում արդեն: Հիշեցնենք, որ սեպտեմբերի 25-ին Ասկերանի շրջանում պայթյուն էր եղել վառելիքի պահեստում:



«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ դատական համակարգում խառնաշփոթ է: Երեւան քաղաքի մի շարք դատարաններում, ինչպես մարզերի բոլոր դատարաններում, քառս է, քանի որ տեւական ժամանակ է, ինչ «խափանվել է» դատական գործերի էլեկտրոնային մակագրման համակարգը: Միանգամայն «պատահականությամբ» համակարգը խափանվեց հենց այն օրը, երբ ավարտվեցին Երեւանի փողոցներում բողոքի ակցիաները, եւ մասնակից անձանց ապօրինի կալանավորումների դեմ բողոքարկման ժամկետները սկսվեցին: Մեզ հասած տեղեկությունների համաձայն՝ արդեն երեք օր է՝ մակագրումները կատարվում են պարզ թղթային եղանակով, ու իրավապաշտպաններն ահազանգում են, որ աղմկահարույց գործերը կմակագրվեն քաղաքական իշխանության «սրտի դատավորներին»: Տեղեկացանք, որ երբ դատական համակարգից խնդրի մասին ահազանգել են Կարեն Անդրեասյանի գլխավորած Բարձրագույն դատական խորհուրդ, ԲԴԻ-ից վստահեցրել են, թե սեպտեմբերի 29-ին կգործի, սակայն հոկտեմբերի 5-ին համակարգը դեռ չի գործել: «Ժողովուրդ» օրաթերթը դիմեց ԲԴԻ, որտեղից ի պատասխան հայտնեցին. «Ոչ միայն նշված քրեական դատարանում ենք ունեցել խափանում, այլեւ մարզերում, օրինակ՝ Շիրակի մարզում: Օրեր շարունակ չէր գործում նաեւ ԲԴԻ պաշտոնական կայքը: Այդ խափանումները, նախնական վարկածով, կապված են հոսանքի տատանումների հետ: Ներկայումս աշխատանքներ են տարվում ինչպես համակարգը վերագործարկելու, այնպես էլ խափանման պատճառները հասկանալու համար: Այս պահին հաջողվել է վերագործարկել պաշտոնական կայքը»:



ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԶՐՈՒՅՑ

ԻՆՉՈ՞Ւ ԲԱՅԱՆԱՅԵՑ ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆԻՑ

Հայաստանի խորհրդարանը հոկտեմբերի 3-ին ընդունեց Հռոմի կանոնադրության վավերացման նախագիծը՝ Հռոմի սահմանադրությունը: Ընդգծեմք, որ այն ընդունվել է միայն իշխող «Բազմադրական դաշմանագիր» խմբակցության փակակցության արդյունքում: ԲԳ-ական դասգամավորները 60 կողմ ձայներով վավերացրին Հռոմի սահմանադրությունը: Ընդգծեմք «Հայաստան» եւ «Պատիվ ունեն» ֆրակցիաները դեմ փակակցեցին դրան՝ հայտարարելով, որ այն հասարակականությանը և եւ նուրբ աղետներ է բերելու Հայաստանի համար. ընդգծեմք դասգամավորներից մի քանիսն էլ չմասնակցեցին փակակցությանը:



Հիշեցնենք, որ ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինի խոսնակ Ռմիտի Պետկովն ասել էր, որ Հայաստանի կողմից Հռոմի ստատուտի վավերացումն իրենք կդիտարկեն որպես ծայրահեղ թշնամական վերաբերմունք:

Պարզվում է, որ ԲԳ-ում էլ կան պատգամավորներ, որոնք դեմ են այս ոչինչ չտվող, հակառակը՝ մի շարք վտանգներ պարունակող համաձայնագրի վավերացմանը:

«Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ իշխանական պատգամավորներից 4-ը՝ Շիրակ Թորոսյանը, Դավիթ Դանիելյանը, Սերգեյ Բազրատյանը, Նարեկ Գրիգորյանը, գրանցել, սակայն չեն քվեարկել, իսկ ԲԳ-ական 7 պատգամավոր էլ՝ Համբարձումյան Կարենը, Պողոսյան Քրիստինեն, Խաչատուր Սուքիասյանը, Գուրգեն Արսենյանը, Մաթեոս Ասատրյանը, Կնյազ Հասանովը, Ղալուբյան Վահեն, առհասարակ չեն ներկայացել նիստին, թեպետ նրանցից եւ ոչ մեկը, կարծես թե, գործուղման մեջ չեն գտնվում:

«Ժողովուրդ» օրաթերթը գրուցել է ԲԳ-ական պատգամավոր Նարեկ Գրիգորյանի հետ պարզելու, թե որն էր նրա՝ քվեարկությունից բացակայելու պատճառը:

«Պարոն Գրիգորյան, նախապես իշխանական պատգամավորներին ասվել էր, որ մեկ մարդու նման գան եւ մասնակցեն Հռոմի ստատուտի վավերացմանը: Մյուս էր պատճառը, որ Դուք ուշացած մտաք նիստերի դահլիճ ու չմասնակցեցիք քվեարկությանը. արդյոք դեմ եք դրա վավերացմանը, թե՛ այլ պատճառ կա:

«Զեմ հասցրել պարզապես, դրա համար էլ չեմ մասնակցել քվեարկությանը: Դրա-

նից հետո հազիվ եմ հասել ԱԺ, մի քանի քվեարկություն բաց էի թողել, բայց «Բազմադրական պայմանագիր» խմբակցության արած յուրաքանչյուր հայտարարությանը՝ ներառյալ Հռոմի ստատուտը, ես կողմ եմ: Նույնը ՀՀ վարչապետի ասած յուրաքանչյուր բառի ել նախադասության բովանդակության տակ ես ստորագրում եմ:

-Այսինքն՝ եթե գալիք, ամեն դեպքում, կողմ էիք քվեարկելու նախագծին:

-Այո, միանշանակ:

-Պարոն Գրիգորյան, բայց համացանցում տարածված տեսակետերից երեւում է, որ երբ Դուք ուշացած ներս եք մտնում, խմբակցության ղեկավար Հայկ Կոնջորյանը կշտամբանքով է նայում Ձեզ, հավանաբար, Հռոմի ստատուտի վավերացմանը չմասնակցելու համար:

-Ես չգիտեմ՝ կարող եմ ինչ է երեւում, այդ մասով ոչ մի հարց չի քննարկվել, ես ընդամենը ուշացել էի, ինձ ոչ մեկ կշտամբանքով չի նայել:

-Այսինքն՝ Ձեզ նկատողություն չե՞ն արել պայմանավորվածությունը խախտելու ու քվեարկությանը չներկայանալու համար:

-Դե իրենք տեսան, որ ես ընդամենը ուշացել եմ, այսինքն՝ չհասցրեցի գալ. երբ մտա, արդեն մեկ-երկու քվեարկություն անցել էր:

-Պարոն Գրիգորյան, ռուսական կողմնամենաբարձր մակարդակով հայտարարել է, որ Հայաստանի կողմից Հռոմի ստատուտի վավերացումը կդիտարկեն որպես ծայրահեղ թշնամական վերաբերմունք իրենց նկատմամբ: Չե՞ք կարծում, որ սա միայն բացասական հետեւանքներ է ունենալու մեզ համար, իսկ դրա հետեւանքները քաղաքացիներն են կրելու:

«Զեմ կարծում, այնտեղ ընդդեմ Ռուսաստանի ոչինչ չկա. մենք Հռոմի ստատուտը ընդունել ենք, որպեսզի միջազգային հանցագործները պատժվեն: Այո, միջազգային հանցագործները պետք է պատժվեն:

Ջրուցեք ԲՐԻՍՏԻՆԱ ՍՈՒՇԵՂՅԱՆԸ



ԲՈՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳԵՐԵՎԱՐՈՒՄ

Հայ ժողովուրդն այս օրերին թերեւս պատմության ամենամեծ եւ ամենամեծ իրադարձություն է ապրում: Հայկական երկրորդ պետությունը՝ Արցախը, ամբողջությամբ հայաթափված է, իսկ Արցախի ռազմաքաղաքական ղեկավարությունը՝ «գլխատված»: Բազմաթիվ ծանր հանցագործությունների հեղինակ, մարդասիրական բոլոր նորմերը ոտնահարած ագրեսոր Ադրբեյջանը ամենագլխով եւ շինծու մեղադրանքներով ձերբակալել է Արցախի նախկին պետնախարար Ռուբեն Վարդանյանին, Արցախի ՊԲ հրամանատարի նախկին տեղակալ, գեներալ Դավիթ Մանուկյանին, ՊԲ նախկին հրամանատար, գեներալ Լեւոն Մազականյանին, Արցախի նախկին արտգործնախարար Դավիթ Բաբայանին եւ Արցախի նախկին երեք նախագահներին: Երեկ էլ Ադրբեյջանն իր ներքին լարակի քիմքը շոյելու, իսկ հայ հասարակության վրա լրացուցիչ ճնշում գործադրելու համար տարածել էր նախագահներին բերման ենթարկելու կարգը: «Ժողովուրդ» օրաթերթը, ուսումնասիրելով այս տեսանկյունները, արձանագրեց, որ ԱՀ նախկին նախագահ Արայիկ Յարուբյանյանի ակնարկի ապակին կտրված է, իսկ մի տեսանկյունում արդեն Յարուբյանյանի ակնարկը չկար: Այս ամենից ակնհայտ է դառնում, որ նրա նկատմամբ Բաքվում բռնություն է կիրառվել: «Ժողովուրդ» օրաթերթը դիմեց ՄԻՊ աշխատակազմ՝ պարզելու՝ արդյոք արձանագրել են բռնության այս ակնհայտ փաստը, եւ ինչ քայլեր են ձեռնարկում այս ուղղությամբ: ՄԻՊ աշխատակազմից, հղում կատարելով սեպտեմբերի 29-ին տարածած իրենց հարդրագրությանը՝ Ռուբեն Վարդանյանի գերեզման վերաբերյալ, ասացին, որ գերեզմանը պաշտոնյաների ու մյուս քաղաքացիների խնդիրն իրենց ուշադրության կենտրոնում է, եւ անհրաժեշտ քայլեր ձեռնարկվում են: Թե կոնկրետ ինչ է երբ են արել, օմբուդսմենի գրասենյակից չասացին: Թերեւս առարկայական ոչինչ էլ չի անում ԲԳ-ի պաշտպան դատախազ օմբուդսմենը:

ՊԱՏԳԱՄԱՎՈՐԻ ՈՒՆԵՑՎԱԾՔԸ

«Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Հայկո Ասլանյանը, լինելով պատմության մասնագետ, հայտնի է իր հակահայկական հայտարարություններով: Հիշեցնենք նաեւ, որ Ասլանյան այն պատգամավորն է, որ Հովիվ Աղազարյանի հետ այցելել էր Եռաբլուր, որտեղ ընդհարում էր եղել զինվորների ծնողների հետ: Հենց այդ պատճառով էլ ԲԳ-ականներից լուրջ նկատողություն էր ստացել Ասլանյանը: Հայկո Ասլանյանը 8-րդ գումարման Ազգային Ժողովի պատգամավոր է: Նրա՝ հաշվետու տարվա եկամուտները կազմում են 9 մլն 273 հազար դրամ, որից 8 մլն 545 հազար դրամը աշխատանքի վարձատրություն է ՀՀ Ազգային Ժողովի աշխատակազմից: Եկամտի մյուս մասը՝ 728 հազար դրամը, կենսաթոշակ է ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարությունից: Ասլանյանը հայտարարագրել է մեկ բնակարան Երեւանի Նորք-Մարաշ վարչական շրջանում, որը ձեռք է բերել 1987 թվականին, սակայն պատգամավորը դրանով չի սահմանափակվել: Նրա ստացված վարկերի եւ փոխառությունների մասին պատմող բաժնից հասկանում ենք, որ նա ունի նաեւ հիփոթեքով բնակարան, որի մայր գումարի մնացորդը կազմել է 26 մլն դրամ: Նա որեւէ տրանսպորտային միջոց չի հայտարարագրել: Նրա բանկային ավանդները կազմել են 4 հազար 720 դրամ, իսկ կանխիկ դրամական միջոցները՝ 1 մլն 200 հազար դրամ: Ըստ հայտարարագրի՝ պատգամավորը հանդիսանում է «Ազգային կամուրջ» ՀԿ-ի նախագահ: Հիշեցնենք նաեւ, որ Հայկո Ասլանյանն այն հայտնի ուսուցիչն է, որը դատարկ դասարանում դաս է անցկացրել եւ տնայիններ է հանձնարարել:

ԻՐԱՎԻՃԱԿ

ՀՌՈՄԻ ՍՏԱՏՈՒՏԻ ՀԵՏԵՎԱՆՔԸ

Հոկտեմբերի 3-ին Ազգային ժողովը վավերացրել է Հռոմի սահմանադրությունը: Այս եւ Հայաստանի ու Ռուսաստանի ռազմական հարցերի մասին «Ժողովուրդ» օրաթերթը գրուցել է ռուս ֆալսֆազե Մոդեա Կոլեբովի հետ:

«Պարոն Կոլեբով, Ֆրանսիան օրերս հայտարարեց, որ կաջակցի Հայաստանին ռազմամթերքով: Մենք վաղուց ռազմական գործընկերներ էինք Ռուսաստանի հետ. կտուժեն արդյոք այս հարաբերությունները Ֆրանսիայի նման հայտարարությունից հետո:

«Մենք Ֆրանսիայի հետ ունեցած կապերից՝ Հայաստանի հետ հարաբերություններն արդեն տուժել են: Փաշինյանի հայտարարություններից եւ գործողություններից դա պարզ է դառնում, հատկապես՝ համաձայն Հռոմի կանո-

նադրության: Այդ հարաբերությունները Փաշինյանի օրոք այլեւս չեն վերականգնվելու:

«ՀՀ Ազգային ժողովը վավերացրեց Հռոմի ստատուտը. ինչպե՞ս այն կազդի հայ-ռուսական ռազմական հարաբերությունների վրա: Ըստ Ձեզ՝ ի՞նչ քայլերի կզնա Ռուսաստանն այս ուղղությամբ:

«Բանը հանգեցնում է Ռուսաստանի եւ Հայաստանի միջեւ ցանկացած գործընկերության իսպառ դադարեցմանը, իսկ այս իրավիճակի նախաձեռնողը հենց Հայաստանն է:

«Հայաստանը փորձում է նաեւ ռազմական աջակցություն ստանալ Հնդկաստանից. սա ի՞նչ խնդիրների կարող է հանգեցնել հայ-ռուսական հարաբերություններում:

«Հայաստանը կարող է փորձել անել ամեն ինչ հարաբերություններ ստեղծելու համար, սակայն գնացքն արդեն մեկնել է:

«Արցախում տեղի ունեցած իրադարձություններից հետո Ադրբեյջանը մասսայականորեն ձերբակալեց Արցախի նախկին 3 նախագահներին եւ ռազմական ուժերի ներկայացուցիչներից մի քանիսին. ինչո՞ւ այս հարցում չմիջամտեցին խաղաղապահները, քանի որ նրանց ձերբակալել էին հենց Հակարի կամրջի մոտ գտնվող ապօրինի անցակետից:

«Խաղաղապահների մանդատը չի ներառում ոստիկանական գործառնություններ եւ չի ճանաչում Բաքվի կողմից: Բավական է ավելի է, որ 100 հազար արցախցիների փրկեցին: Բացի այդ, Փաշինյանը հրապարակավ հրաժարվեց Արցախից նույնիսկ խաղաղապահների այդտեղ գտնվելու ժամանակ:

Ջրուցեք ԷՄՍՍ ՄԻՔԱՅԵԼՅԱՆԸ

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ՀՌՈՄԻ ՄՏԱՏՈՒՄԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ՝ ԿԱՆՈՆԱԴԻՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ



Երեւանի ավագանին երեկ՝ հոկտեմբերի 5-ին, արտահերթ նիստ էր հրավիրել:

Նիստի ժամանակ ընդունվել է նոր որոշում, որով հոկտեմբերի 10-ին կայանալիք նորընտիր ավագանու նիստի անցկացման հետ կապված մի քանի հստակացումներ են արվել:

Փաստացի, սա առաջին դեպքն է, երբ քաղաքապետ պետք է ընտրի ոչ թե հանրությունը, այլ ավագանին:

Ինչպես փոխքաղաքապետ Սուրեն Գրիգորյանը երեկվա նիստում նշեց, ուսումնասիրելով կանոնակարգը՝ պարզ է դառնում, որ մանրամասն կանոնակարգում, թե ինչպես պետք է նիստը անցկացվի, բացակայում է: Բացի այդ, օրենքում կա մի դրվագ, երբ նշված է՝ քվեարկությունը պետք է անցկացվի քվեաթերթիկներով, բայց կոնկրետ թե ինչպես այն պետք է ապահովվի, նշված չէ:

Կանոնակարգի փոփոխություններն ուղղված են հենց այս գործընթացը կանոնակարգելու:

Այսպիսով, Ընտրական օրենսգրքը սահմանում է, որ երբ ընտրական ցուցակի առաջին հորիզոնականում գտնվող անձը հրաժարվում է, կամ ավագանու ընտրությունների արդյունքով որեւէ կուսակցություն (կուսակցությունների դաշինք) չի ստանում ավագանու անդամների տեղերի 50 տոկոսից ավելին, ապա համայնքի ղեկավարն ընտրվում է բաց քվեարկության միջոցով:

Ավագանու այսօրվա նիստում կատարված փոփոխությունները ենթադրում են, որ, օրինակ, հոկտեմբերի 10-ին յուրաքանչյուր քվեաթերթիկի վրա պետք է գրվի նաեւ ավագանու անդամի անունը:

Քվեարկության արդյունքներից հետո արդեն քաղաքապետարանում կիրառարկվեն վերջնական արդյունքները, թե ավագանու որ անդամը որ թեկնածուի օգտին է քվեարկել:

Հիշեցնենք, որ «Ազգային առաջընթաց» կուսակցությունը եւ «Մայր Հայաստան» դաշինքը հայտարարել են, որ չեն ներկայանալու նիստին, որպեսզի քվորում չապահովեն: «Հանրային ծայն» կուսակցությունը թեւեւ վերջնական որոշում չի հայտնել, բայց կուսակցության ղեկավար Վարդան Ղուկասյանը հայտարարել է, որ նոր արտահերթ ընտրություններ թույլ տալ չի կարելի:

Ստացվում է, որ եթե «Հանրային ծայն» կուսակցությունից մասնակցություն չլինի նիստին, եւ քվորում ապահովվի, ապա նիստը կկայանա, եւ Տիգրան Ավինյանը, ամենայն հավանականությամբ, կընտրվի Երեւանի քաղաքապետ:

ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՐՅԱՆ

Միջազգային ֆրեական դասարանի Հռոմի սաստուս միջազգային դպրոց-նազիր, որով հիմնվել է Միջազգային ֆրեական դասարանը (ՄԲԳ): Ընդունվել է Հռոմում 1988 թվականի հուլիսի 17-ին կայացած դիվանագիտական կոնֆերանսում եւ ուժի մեջ է մտել 2002 թվականի հուլիսի 1-ից:

Ձեւավորման Պատմությունը

1990-ական թվականներին գործած միջազգային տրիբունալները (Նախկին Հարավսլավիայի գործով միջազգային քրեական տրիբունալը եւ Ռուանդայի գործով միջազգային քրեական տրիբունալը) միջազգային հանրությանը ցույց տվեցին, որ ցեղասպանությանը, ռազմական հանցագործություններին եւ մարդկության դեմ ուղղված հանցագործություններին առնչվող գործերի որոշման համար անհրաժեշտ է ստեղծել անկախ եւ մշտական դատարան:

1998 թվականի հունիսին ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեան կոնֆերանս հրավիրեց՝ «միջազգային քրեական դատարան ստեղծելու նպատակով կոնվենցիայի ավարտման եւ ընդունման համար»:

1998 թվականի հուլիսի 17-ին Հռոմի ստատուտն ընդունվեց քվեարկության միջոցով, որի ընթացքում 120 պետություն քվեարկեց «կողմ», 7-ը՝ «դեմ» (ԱՄՆ, Չինաստան, Իրաք, Յեմեն, Կատար, Լիբիա եւ Իսրայել) եւ 21 պետություն ձեռնպահ մնաց:

ՄԲԳ-ի Կանոնադրության ուժի մեջ մտնելու համար պայման էր հանդիսանում Կանոնադրության վավերացումը ոչ պակաս, քան 60 պետության կողմից: Այդ «խոչընդոտը» հաղթահարվեց 2002 թվականի ապրիլի 11-ին: Համաձայնագիրն ուժի մեջ մտավ 2002 թվականի հուլիսի 1-ին:

Դատարանի իրավասություն

Հռոմի ստատուտի 5-րդ հոդվածի համաձայն՝ Միջազգային քրեական դատարանի իրավասությունը պետք է սահմանափակված լինի ամբողջ միջազգային հանրությանը մտահոգող ամենածանր հանցագործություններով: Դատարանը իրավասություն ունի հետեւյալ հանցանքների նկատմամբ՝ ցեղասպանություն, մարդկության դեմ հանցագործություններ, պատերազմական հանցագործություններ, ագրեսիա:

Դատարանի իրավասությունը ժամանակի մեջ

Հռոմի ստատուտի 11-րդ հոդվածի համաձայն՝ Դատարանը իրավասություն ունի



միայն այն հանցանքների նկատմամբ, որոնք կատարվել են ստատուտի ուժի մեջ մտնելուց հետո, այսինքն՝ 2002 թվականի հուլիսի 1-ից հետո: Եթե պետությունը դառնում է ստատուտի կողմ դրա ուժի մեջ մտնելուց հետո, ապա Դատարանը իր իրավասությունը կարող է տարածել այդ պետության համար ստատուտի ուժի մեջ մտնելուց հետո կատարված հանցանքների նկատմամբ: Ընդհանուր առմամբ, Հռոմի ստատուտը ստորագրել են 139 պետություններ, բայց համաձայնագիրը վավերացրել են ոչ բոլորը:

Հայաստանը ստորագրել է Հռոմի ստատուտը 1999 թվականի հոկտեմբերի 1-ին: Հայաստանի Սահմանադրական դատարանը համաձայնագիրը մասնակիորեն հակասահմանադրական էր ճանաչել:

2023 թվականի մարտի 28-ին Հայաստանի Սահմանադրական դատարանը հրապարակել է նաեւ նոր որոշման տեքստ՝ անդրադառնալով նաեւ 2004 թվականի որոշմանը: 2023 թվականի հոկտեմբերի 3-ին Հայաստանի ազգային ժողովը վավերացրեց Հռոմի ստատուտը 60 կողմ եւ 22 դեմ ձայներով:

Պայանագիրը ստորագրած տարածաշրջանի պետություններ

Ընդհանուր առմամբ, Հռոմի ստատուտը ստորագրել են 139 պետություններ, բայց համաձայնագիրը վավերացրել են ոչ բոլորը: 2019 թ. նոյեմբերի դրությամբ ստատուտի մասնակից են 123 պետություններ:

2023 թվականի սեպտեմբերի 13-ին՝ ԱԺ-ում Կառավարության հետ հարցուպատասխանի ժամանակ, Նիկոլ Փաշինյանը հայտարարել է, որ Հայաստանը վավերացրելու է Միջազգային քրեական դատարանի Հռոմի կանոնադրությունը ամբողջությամբ:

Ռուսաստանը ստորագրել է Հռոմի ստատուտը, բայց չի վավերացրել այն: 2016 թվականին, սակայն, երկիրը որոշել է չեղարկել իր ստորագրությունը այն բանից հետո, երբ Միջազգային քրեական դատարանը Ռուսաստանի Ղրիմում իրականացրած գործողությունները որակել է «օկուպացիա»:

2023 թվականի մարտի 17-ին դատարանը կայացրեց Ռուսաստանի եւ դրա նախագահ Վլադիմիր Պուտինի դեմ մեկ որոշում՝ կարգադրելով ձերբակալել Պուտինին՝ ուկրաինացի երեխաների բռնի տեղահանման հիմքով:

Իրանը ստորագրել է Հռոմի ստատուտը 1999 թվականի հոկտեմբերի 1-ին, սակայն մինչեւ այժմ չի վավերացրել այս համաձայնագիրը:

Թուրքիան ու Ադրբեջանը չեն ստորագրել Հռոմի ստատուտը:

Վրաստանը ստորագրել է Հռոմի ստատուտը 1998 թվականի հուլիսի 18-ին, իսկ վավերացրել է 2003 թվականի սեպտեմբերի 5-ին՝ Էդուարդ Շեւարճյանի կառավարման օրերին: Կանոնադրությունը սահմանում է դատարանի գործառնությունները, իրավագործությունը եւ կառուցվածքը:

ՕՇԵՆԱ ՅՈՒՆԿՆԱՆԻՍՅԱՆ

ՕՐԿԱՆՃԱՆԿԱՐ

ՀԱՃԱԽՈՒՄ ԵՆ ԳՊՐՈՑ

ԼՂ-ից բռնի տեղահանված 6104 երեխա արդեն իսկ հաճախում է դպրոց:

ԿԳՄՍ նախարար ժաննա Անդրեասյանի ներկայացմամբ՝ 6104 երեխա արդեն իսկ հաճախում է դպրոց: Տեղաբաշխվածությունն ըստ մարզերի հետեւյալն է՝ Արագածոտնում՝ 306, Արարատում՝ 943, Արմավիրում՝ 467, Գեղարքունիքում՝ 294, Լոռիում՝ 315, Կոտայքում՝ 1033, Շիրակում՝ 216, Սյունիքում՝ 216, Վայոց ձորում՝ 108, Տավուշում՝ 158, Երեւանում՝ 2048: Նրա խոսքով՝ առաջիկա օրերին աշակերտների թիվը կավելանա, եւ կապահովվի ՀՀ-ում գտնվող բոլոր դպրոցահասակ երեխաների կրթության շարունակականությունը: Ըստ նախարարի՝ երեխաները հընթացս ապահովվում են նաեւ գրեական

պիտույքներով, կարգավորվում է դասագրքերի հարցը: ԼՂ-ից բռնի տեղահանված մեր հայրենակիցներին դասագրքերը տրամադրվում են անվճար դպրոցների կողմից:

ԵՐԵՎԱՆԻ ԹՅՈՒՆ Ե ԲԱՆԴՎՈՒՄ

Երեւանի քաղաքապետի մամուլի խոսնակ Հայկ Կոստանյանը տեղեկացնում է, որ Աջափնյակ վարչական շրջանի Սիլիկյան թաղամասում քանդվում է ապօրինի 21 շինություն:

«Երեւանի քաղաքապետի համապատասխան որոշումներով՝ Աջափնյակ վարչական շրջանի, Սիլիկյան թաղամասի 9-րդ փողոցի եւ գերեզմանին հարակից տարածքում քանդվում են առանց հողօգտագործման իրավունքի եւ առանց համապատասխան թույլտվությունների թվով 21 շինություն: Նշված բոլոր շինություններն ապօրինի են եւ կառուցվել են վերջին ամսիների ընթացքում համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի վրա», - այս մասին ասվում է Հայկ Կոստանյանի ֆեյսբուքյան էջում արված գրառման մեջ:

ԱԴԻԲԵՋԱՆԸ ԿԱԼԱՆԱՎՈՐԵՑ

Բակո Սահակյանի, Արկադի Ղուկասյանի եւ Դավիթ Իշխանյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը: Ինչպես հայտնում է Ադրբեջանի պետական անվտանգության ծառայությունը, նրանք հարցաքննվել են:

Երեք գործիչներն էլ կալանավորվել են 4 ամսով:

ԶԱՐԱՇԱՐՈՒՄ

ԲԱԺՆԻ ՊԵՏԸ՝ ԴԱՏԱՐԱՆԻ ԱՌԱՋ

«Տողովուրդ» օրաթերթին հայսնի դարձավ, որ Լիդարիս Վարդեսյանը, գրադեցնելով Երեւանի քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի քաղաքապետի հրահանգով, եւ հողօգտագործման բաժնի ղեկավարի, հանդիսանալով սեղական ինքնակառավարման մարմնի անունից իրավունք, դատարանային եւ դատաստանային գործունեությունն առաջացնող գործառույթներ իրականացնող, բաժնի աշխատանքները համակարգելու եւ ղեկավարելու, ինչպէս նաեւ համադասասխան հիմնախնդիրների լուծմանն ուղղված որոշումներ կայացնելու լիազորություններ ունեցող դատահասարակական մարմնի անունով, նույն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի քաղաքապետի հրահանգով, բաժնի աշխատանքները համակարգելու եւ ղեկավարելու, ինչպէս նաեւ համադասասխան հիմնախնդիրների լուծմանն ուղղված որոշումներ կայացնելու լիազորությունները եւ դրանցով դաստիարակող ստանդարտները օգտագործելով, սարքեր ֆալսույթներ կամ նրանց մասնագետներ անձանց օգտին գործողություններ կատարելու համար սարքեր անձանցից դառնալու եւ ստացել են կաշառք:



րություններ ունեցող Լիդարիս Վարդեսյանի հետ նախնական համաձայնությամբ՝ խմբի կազմում, իրենց ծառայողական լիազորությունները եւ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով, տարբեր քաղաքացիների, ինչպէս նաեւ նրանց մատնանշած անձանց օգտին գործողություններ կատարելու, ինչպէս նաեւ թողտվության եւ հովանավորության դիմաց 2023 թվականի տարբեր ժամանակահատվածում վերջիններիս կողմից, ինչպէս նաեւ նրանց մատնանշած անձանց օգտին շինարարական աշխատանքների անխցընդոտ իրականացման համար գործողություններ կատարելու կամ գործողություններ կատարելուց գերծ մնալու դիմաց պահանջել, իսկ որոշ դեպքերում ստացել են տարբեր չափերով կաշառք:

Արթուր Աբրահամյանը, Երեւան քաղաքի բնակիչ, իր բարեկամ Զարգիկ Սամսոյանի կողմից լիազորված լինելով վերջինիս անունից Աջափնյակ վարչական շրջանի աշխատակազմում դիմումներ ներկայացնելու եւ այնտեղից պատասխաններ ստանալու իրավունքով, Զարգիկ Սամսոյանի կողմից Սիլիկյան թաղամաս, 7-րդ փողոց, հ. 58/1 հասցեում կառուցվող բնակելի տան եւ պարսպի նախագծային փաստաթղթերը համաձայնեցնելու եւ շինարարության թույլտվություն ստանալու համար դիմում եւ ներկայացնել Աջափնյակ վարչական շրջանի ղեկավարին, ինչի կապակցությամբ դիմել է պաշտոնատար անձ հանդիսացող Երեւան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի քաղաքապետի հրահանգով:

Եւ հողօգտագործման բաժնի գլխավոր մասնագետ Վահան Բեսայանին, որը, իր գործողությունները նախապես համաձայնեցնելով Աջափնյակ վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի քաղաքապետի հրահանգով, եւ հողօգտագործման բաժնի պետ Լիդարիս Վարդեսյանի հետ, 2023 թվականին՝ դեռեւս չպարզված օրը, Արթուր Աբրահամյանից վերջինիս մատնանշած անձի՝ Զարգիկ Սամսոյանի օգտին գործողություններ կատարելու, այն է՝ վերջինիս կողմից կառուցվող բնակելի տան եւ պարսպի շինարարական աշխատանքների ճարտապետահատակագծային առաջադրանքը եւ շինարարություն թույլտվությունը տրամադրելու համար, պահանջել եւ Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանում Արթուր Աբրահամյանից մաս-մաս ստացել է ընդհանուր 250.000 ԶԴ դրամ կաշառք, որից 130.000 ԶԴ դրամը ստացել է դեռեւս չպարզված օրը, 40.000 ԶԴ դրամը՝ 2023 թվականի մայիսի 15-ին, իսկ մնացած 80.000 ԶԴ դրամը ստացել է 2023 թվականի հունիսի 12-ին:

Գեղամ Տոնոյանը Երեւան քաղաքի Սիլիկյան թաղամասի 5-րդ փողոց 24/2-րդ տան աստիճանների քանդման եւ փոխարինման գործընթացը ԶԴ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ N 596-Ն որոշմամբ սահմանված պահանջների խախտմամբ, այն է՝ առանց համապատասխան փաստաթղթերի իրականացնելու եւ տվյալ գործընթացի իրականացման ընթացքում խախտումները ընդարկելու նպատակով նշված հարցը քննարկել է պաշտոնատար անձ հանդիսացող Երեւան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի քաղաքապետի հրահանգով: Երեւան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի քաղաքապետի հրահանգով Վահան Բեսայանի հետ, որը Գեղամ Տոնոյանի կողմից վերջ նշված ապօրինի շինարարությունը չարձանագրելու թողտվության եւ ապօրինի անգործության համար վերջինիցս 2023 թվականի մարտի 25-ին պահանջել է 500.000 ԶԴ դրամ կաշառք, իսկ Գեղամ Տոնոյանը, համաձայնեցնելով առաջարկին, իր օգտին պաշտոնատար անձի կողմից թողտվության եւ ապօրինի անգործության համար Վահան Բեսայանին խոստացել է տալ 500.000 ԶԴ դրամ կաշառք:

ՔՆՍՐ ՍՍՆՈՒԿՅԱՆ

ԿԱՐԵՎՈՐ

ՀՕԳՈՒՏ ՀԱՅԱՍՏԱՆԻ



Երեկ՝ հոկտեմբերի 5-ին, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը հրապարակել է մեկ վճիռ եւ երեք որոշում՝ հօգուտ Հայաստանի Հանրապետության:

Մասնավորապես, «Գուրբանով» ընդդեմ Հայաստանի» գործով, որը վերաբերում էր դիմումատուի որդու (Ադրբեջանական զինված ուժերի հատուկ ստորաբաժանման զինծառայող) դիակը ԶԴ կողմից Ադրբեջանին վերադարձնելու եւսթադիոյալ ձգձգումներին, ՄԻԵԴ-ը արձանագրել է, որ ԶԴ կողմից թույլ չի տրվել կոնվենցիայի 8-րդ (անձնական եւ ընտանեկան կյանքը հարգելու իրավունք) եւ 14-րդ (խտրականության արգելք) հոդվածների խախտում, իսկ 3-րդ (խոշտանգման արգելք) հոդվածի ներքո ներկայացված դիմումատուի պահանջը ՄԻԵԴ-ը ճանաչել է անընդունելի:

«Ազգարովյան եւ Վեսելովսկի» ընդդեմ Հայաստանի» գործով, որը վերաբերում էր ադրբեջանցի դիվերսանտներ Գուլիեյի եւ Ազգարովյան կոնվենցիոն իրավունքների եւսթադիոյալ խախտումներին, գանգատն ամբողջությամբ ճանաչվել է անընդունելի: Այս գործով ՄԻԵԴ-ը գտել է, որ դիմումատուների ամուսինները՝ Ազգարովյան եւ Գուլիեյը, որոնք դատապարտվել էին Լեռնային Ղարաբաղում, չեն գտնվել այնպիսի բացարձակ մեկուսացման մեջ, որը գրկեր նրանց իրենց հարազատների հետ շփումից: Նրանց նկատմամբ ցուցաբերվել է նույնպիսի վերաբերման, ինչպէս մնացած դատապարտյալների նկատմամբ: Ավելին՝ նրանք զրկված չեն եղել ՄԻԵԴ դիմելու համար իրենց հարազատներին կամ որեւէ իրավապաշտպանի լիազորագիր ներկայացնելու հնարավորությունից:

«Ալիեյը՝ ընդդեմ Հայաստանի» եւ «Ալլահվերդիեյը՝ ընդդեմ Հայաստանի» գործերով, որոնք վերաբերում էին 2016 թվականի ապրիլյան քառօրյա պատերազմի ընթացքում դիմումատուների կոնվենցիոն մի շարք իրավունքների, այդ թվում՝ սեփականության իրավունքի եւսթադիոյալ խախտումներին, ՄԻԵԴ-ը գանգատները ճանաչել է անընդունելի՝ պատերազմական ակտիվ գործողությունների ընթացքում տեղի ունեցած վերջ նշված եւսթադիոյալ խախտումների նկատմամբ իր իրավագործության բացակայության հիմքով: Նույն հիմնավորմամբ անընդունելի են ճանաչվել նաեւ «Հակոբյանը՝ ընդդեմ Ադրբեջանի» եւ «Օհանյանը՝ ընդդեմ Ադրբեջանի» գործերը:

ՈՒՇԱԳՐԱԿ

ՀՐԱՂԱՆԳԵԼ Է ՀԱՓՇՏԱԿԵԼ

«Տողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ դասախազը 2023 թվականի հոկտեմբերի 4-ին հանրային քննական հետադուրմ է հարուցել 1992-2018 թվականներին Պաշտպանության նախարարությունում եւ Ոստիկանությունում մի քանի, այդ թվում՝ Արարիկի եւ Կենտրոնականի զինվորական կոմիսարի, ՀՀ ոստիկանության ղեկավարի ղախկանության գլխավոր վարչության ղեկի ղախկանները գրադեցրած Վ.Մ.-ի նկատմամբ՝ առանձնադեպ խոշոր չափերով գումարներ յուրացնելու եւ առանձնադեպ խոշոր չափերով փողերի լվացման համար:

հետո, նույն վարչության Արմավիրի պահպանության բաժանմունքի պետի պաշտոնը զբաղեցրած Խ.Ա.-ին հրահանգել է հափշտակել նրան վստահված պետական միջոցներից եւ որպէս մասնաբաժին՝ յուրաքանչյուր ամիս իրեն տալ 1000 ԱՄՆ դոլար՝ երաշխավորելով, որ հափշտակությունը չի բացահայտվի: Արդյունքում Վ.Մ.-ն նշված ժամանակահատվածում կազմակերպել է Խ.Ա.-ին վստահված պետական միջոց հանդիսացող 13 մլն 935 հազար 200 դրամի յուրացումը, որից 8 մլն 239 հազար 390 դրամին համարժեք 17 հազար ԱՄՆ դոլարը՝ որպէս հափշտակված գումարի մասնաբաժին, տրվել է Վ.Մ.-ին:

Վ.Մ.-ն, 1992 թվականից մինչեւ 2018 թվականը Պաշտպանության նախարարությունում եւ Ոստիկանությունում զբաղեցնելով մի շարք պաշտոններ, ստացել է մոտ 821 հազար 128 ռուբլի եւ 39 մլն դրամ աշխատավարձ, սակայն նույն ժամանակահատվածում ձեռք է բերել եւ օտարել անշարժ ու շարժական գույքեր, ԶԴ-ում գործող բանկերում կատարել է ապօրինի ստացված կանխիկ գումարների տարբեր չափերով մուտքագրում, ձեւակերպել ավանդներ, փոխանցումներ է կատարել, որոնք ընդհանուր արժեքով էականորեն գերազանցել են նրա օրինական եկամուտները:

Վ.Մ.-ն ձեռնարկատիրական գործունեությանը մասնակցելու, պետական գույքի յուրացմանը հանցակցելու եւ հանցավոր ճանապարհով ստացված առանձնապես խոշոր չափերով եկամուտների հանցավոր ծագումը թաքցնելու եւ խեղաթյուրելու նպատակով օրինականացրել է 1 մլրդ 418 մլն 60 հազար 977 դրամ:

● Ըստ ոստիկանության տվյալների՝ հոկտեմբերի 4-ից 5-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 49 դեպք, որոնցից 1-ը՝ նախկինում կատարված:

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՄԱՐԶՊԵՏԸ ԹԱՔՑՆՈՒՄ Է

Տավուշի մարզպետ Յայլ Ղալումյանը օգոստոսի 29-ին նիստ է անցկացրել Տավուշի մարզում անտառային ել բուսածածկ տարածքների հնարավոր բողոքական գործունեության մշտադիտարկման, հրդեհների կանխարգելման, անհրաժեշտ կարողությունների գնահատման, արագ արձագանքման, հրդեհների դեմ պայքարի, դրանց տարածման կանխման, ինչպես նաև դրանց հետեւանքների վերացմանն ուղղված միջոցառումների իրականացման նպատակով ստեղծված աշխատանքային խմբի հետ, քննարկվել են անտառային հրդեհների, փայտածուխի արտադրման հետ կապված հարցեր: Սեպտեմբերի 8-ին «Ժողովուրդ» օրաթերթը մարզպետին տեղեկատվական հարցում է ուղարկել, թե մարզում փայտածուխի քանի արտադրամաս է գործում, դրանիցից քանիսն են համապատասխանում բնապահպանական և հակահրդեհային կանոնների: Սեպտեմբերի 18-ին մարզպետարանից ստացված պատասխանում նշված է. «Մարզում գործում են փայտածուխի արտադրամասեր, որոնց թիվը հստակ չենք կարող ասել, քանի որ ամենօրյա փոփոխությունների են ենթարկվում կապված գործունեության դադարեցման հետ: Այն արտադրամասերը, որոնք չեն համապատասխանում բնապահպանական և հակահրդեհային կանոններին, ենթարկվում են վարչական պատասխանատվության՝ օրենքով սահմանված կարգով»: Սեպտեմբերի 22-ին նոր հարցում ենք ուղարկել մարզպետ Յ. Ղալումյանին՝ խնդրելով հայտնել մարզում գործող փայտածուխի արտադրամասերի թիվը կոնկրետ օրվա՝ 2023թ. սեպտեմբերի 22-ի դրությամբ: Մարզպետարանից ստացել ենք նախկինում տրված նույն անորոշ պատասխանը. «Մարզում գործում են փայտածուխի արտադրամասեր, որոնց թիվը հստակ չենք կարող ասել, քանի որ ամենօրյա փոփոխությունների են ենթարկվում կապված գործունեության դադարեցման հետ: Այն արտադրամասերը, որոնք չեն համապատասխանում բնապահպանական և հակահրդեհային կանոններին, ենթարկվում են վարչական պատասխանատվության՝ օրենքով սահմանված կարգով»:

Մարզպետ Յայլ Ղալումյանը ինչո՞ւ է թաքցնում մարզում գործող փայտածուխի արտադրամասերի թիվը, դրանց քանակը չհայտնելն արդարացնում այն բանով, թե, իբր, ամեն օր դրանց թիվը փոխվում է: Եթե հավատանք մարզպետի ասած անհեթեթությանը, թե, իբր, փայտածուխի արտադրամասերի քանակն ամեն օր փոխվում է, մարզպետը ինչո՞ւ չի նշել կոնկրետ օրվա՝ սեպտեմբերի 22-ի դրությամբ դրանց թիվը: Իջեան քաղաքում խոսակցություններ են տարածված, որ Նիկոլ Փաշինյանի դասընկեր, նրա հարսանիքի քվոր, Նիկոլ Փաշինյանը որոշմամբ 2021թ. ապրիլի 8-ին Տավուշ մարզպետ նշանակված Յայլ Ղալումյանը կապված է մարզում անտառտնտեսությունների տնօրենների, մարզում փայտի բիզնեսի հետ:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՅԱՆ
Տավուշ

ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐ

ԵՎՐԱԽՈՐՀՐԴԱՐԱՆԸ ԲԱՆԱՁԵՎ Է ԸՆԴՈՒՆԵԼ

Հինգաբլի՝ հոկտեմբերի 5-ին, Ստամբուլում կայացած լիազմար նիստում Եվրախորհրդարանի անդամները ընդունել են իրավականորեն ոչ դառնադիր բանաձեռն, որը կոչ է անում ԵՄ-ին դաժամիջոցներ կիրառել Ադրբեջանի դեմ կապված Լեռնային Ղարաբաղի իրադրությունների հետ, ինչպես նաև վերանայել համազորձակցության զարգացումը և նվազեցնել ադրբեջանական զազի ներկրումից կախվածությունը:



«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ բանաձեռնի կողմ է քվեարկել 491, դեմ՝ 9, ձեռնպահ՝ 36 պատգամավոր: Արտաքին քաղաքականության հարցերի վերաբերյալ Եվրախորհրդարանի բանաձեռնը իրավաբանորեն պարտավորեցնող չէ, սակայն էվրոպական մյուս կառույցները պետք է լսեն Եվրախորհրդարանի պատգամավորների կարծիքը: Փաստաթղթում, մասնավորապես, ասվում է. «Եվրախորհրդարանը կոչ է անում ԵՄ-ին և անդամ երկրներին նպատակաուղղված պատժամիջոցներ սահմանել Ադրբեջանի կառավարության այն անձանց դեմ, որոնք պատասխանատու են Լեռնային Ղարաբաղում հրադարի բազմաթիվ խախտումների և մարդու իրավունքների խախտումների համար»:

Պատգամավորները կոչ են անում «արտաքին քաղաքականության հարցերով ԵՄ բարձր ներկայացուցչին դադարեցնել բանակցությունները Ադրբեջանի հետ գործընկերության համաձայնագրի թարմացման շուրջ, քանի դեռ Ադրբեջանը անկեղծ պատրաստակամություն չի ցուցաբերել հարգելու Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության իրավունքներն ու անվտանգությունը»: Հակառակ դեպքում, պատգամավորները «կոչ են անում ԵՄ-ին և անդամ երկրներին դիտարկել վիզային ռեժիմի դյուրացման մասին համաձայնագրի կիրառումը կասեցնելու և այլ ուղորտներում այս երկրի հետ համագործակցության մակարդակը նվազեցնելու հարցը»:

Եվրախորհրդարանը անհրաժեշտ է համարում, որ ԵՄ-ն «նվազեցնի կախվածությունը Ադրբեջանի գազից», իսկ Բաքվի և Հայաստանի հարաբերություններում լարվածության խորացման դեպքում «իսպառ դադարեցնի նավթի և գազի ներմուծումը» Ադրբեջանից:

Պատգամավորները կոչ են անում ԵՄ-ին «աշխատել ապահովելու միջազգային երաշխիքներ այն հայերի անվտանգությունն ապահովելու համար, որոնք դեռևս շարունակում են ապրել ԼՂ-ում, ինչպես նաև վերականգնել հումանիտար ամբողջական մուտքը տարածաշրջան» և էապես ավելացնել մարդասիրական օգնությունը:

Եվրախորհրդարանը «հիսաթափություն է հայտնում» Ղարաբաղ այցելած ՄԱԿ-ի առաջին առաքելության աշխատանքի կազմակերպման կապակցությամբ և կոչ է անում «Լեռնային Ղարաբաղում միջազգային ներկայություն հաստատել՝ ՄԱԿ-ի հովանու ներքո»:

Փաստաթղթում պատգամավորները քննադատում են Եվրահանձնաժողովին և ԵՄ դիվանագիտության ղեկավար Ժոզեպ Բորելին՝ անտեսելու Եվրախորհրդարանի նախազգուշացումը «Լեռնային Ղարաբաղի շուրջ իրավիճակի բացա-

սական զարգացման մասին», ինչպես նաև այն փաստի համար, որ «նրանց գործողությունները դեռևս չեն հանգեցրել որեւէ դրական արդյունքի»: Եվրախորհրդարանը կոչ է արել ԵՄ-ին և նրա անդամ երկրներին «անհապաղ վերանայել ԵՄ դիվանագիտական և անվտանգության ճարտարապետությունը Հարավային Կովկասի տարածաշրջանում»:

«Եվրախորհրդարանը հիշեցնում է Ադրբեջանին, որ ինքը կրում է ամբողջ պատասխանատվությունը Լեռնային Ղարաբաղի բնակիչների անվտանգության և բարեկեցության համար, ինչպես նաև Ադրբեջանի ապահովելու Լեռնային Ղարաբաղի բնակչության անվտանգությունը՝ համաձայն ՄԱԿ-ի կանոնադրության և համապատասխան միջազգային կոնվենցիաների, միջազգային իրավունքի և մարդու իրավունքների սկզբունքների... Կոչ է անում Ադրբեջանի իշխանություններին ապահովել հայերի անվտանգ վերադարձը Լեռնային Ղարաբաղ», - ասվում է բանաձեռնում:

Պատգամավորները նաև կոչ են արել Բաքվին ազատ արձակել Լեռնային Ղարաբաղից ձերբակալված բոլոր հայերին, այդ թվում՝ քաղաքական գործիչներին:

ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ

ԼԱՐՍԸ ՓԱ՛Կ Է

«Ժողովուրդ» օրաթերթը պարբերաբար ահազանգ է ստանում, որ Լարսի անցակետում հայերին թույլ չեն տալիս անցնել Ռուսաստանի սահմանը: Քաղաքացիները կարծում են, որ սա ռուսական կողմի վրեժն է Հայաստանի հակառուսական հայացքների պատճառով: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ պատճառը Լարսի անցակետում կանգնած հայկական կոնյակով բարձված բեռնատար մեքենաներն են, որոնք Ռուսաստանը կանգնեցրել է կոնյակի որակը ստուգելու համար:

Մենք կապ հաստատեցինք Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության մամուլի քարտուղար Սոնա Հարությունյանի հետ, որը պարզաբանեց. «Ոչինչ չեմ կարող ասել, ինչից մեր տիրույթում չէ, այն լոգիստիկ խնդիր է: Մեքենաներ կուտակված չկան, կուտակված են միայն կոնյակով բեռնված մեքենաները: Նրանք այդ մասին պարզաբանել են»:

Հիշեցնենք, որ Էլնոմիկայի նախարար Վահան Զերթոյանը հայտնել էր, որ պատճառը ռուսական կողմը հայտնել է. ստուգումներ են իրականացնում կոնյակի որակի հետ կապված: Նրա հայտարարությունից առաջ ՌԴ-ում ՀՀ դեսպանությանը կից մաքսային կցորդ Վահան Հակոբյանը նշել էր, որ խոսքը Հայաստանից Ռուսաստան գնացող կոնյակով բեռնված շուրջ 60 բեռնատարի մասին է:

ՀՄՄՍ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ԱԾԽԱՏԱԺԱՄԵՐԸ ԿԵՐՃԱՏՎԵՆ

Կառավարությունը հոկտեմբերի 5-ի նիստում փոփոխություն կատարեց իր որոշումներից մեկում, որով վերանայվում է դպրոցներում և արտադպրոցական հաստատություններում մանկավարժների աշխատածամանակը:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ ԿԳՄՍ նախարարը, ներկայացնելով նախագիծը, նշեց, որ անհրաժեշտություն է առաջացել վերանայել ուսուցչի

կողմից շաբաթական դասավանդող ժամերի թիվը՝ նվազեցնելով դրանք և այդպիսով աշխատածամանակ ազատելով ուսուցչի մյուս կարերը անելիքների համար, որոնք էական ազդեցություն ունեն կրթության որակի վրա:

«Ներկայումս ուսուցչի շաբաթական մեկ դրույթ ծանրաբեռնվածությունը կազմում է 22 դասաժամ: Բացի այդ, հանրակրթության նոր պետական չափորոշումով տարրական դասարաններում միավորային գնահատման համակարգը չի գործում, և ուսուցիչները մեծ ժամանակ պետք է հատկացնեն ձեւավորող գնահատման մեթոդներով սովորողների հետ աշխատելու համար: Ըստ այդմ՝ նախազեղված առաջարկվում է 1-4-րդ դասարաններում դասավանդող ուսուցիչների համար շաբաթական դասավանդման ժամերը սահմանել մեկ դրույթի համար 18 ժամ, իսկ 5-10-րդ դասարաններում՝ 20 ժամ», - ասաց նա: Նախարարը հավելեց, որ սա կհանգեցնի տարրական դասարանների ուսուցիչների մեկ դրույթի վարձարության, ըստ էության, 20 տոկոս աճին, 5-10 դասարաններում 10 տոկոս աճին:

● Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 5 ՃՏՊ. 1 մարդ զոհվել է, 4-ը՝ ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԳՆԱՃԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Հայաստանի Հանրապետության սպառողական շուկայում 12-ամսյա գնաճը (2023 թ. սեպտեմբերը 2022 թ. սեպտեմբերի նկատմամբ) կազմել է 0.1 տոկոս, իսկ նախորդ ամսվա նկատմամբ՝ 0.9 տոկոս:

«Շողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ այս մասին տեղեկացրին ՀՀ վիճակագրական կոմիտեից՝ մանրամասնելով, որ 2023 թվականի հունվար-սեպտեմբերին սպառողական գների միջին ամսական նվազումը կազմել է 0.3 տոկոս (նախորդ տարվա նույն ժամանակահատվածում արձանագրվել է 0.6 տոկոս հավելում): Հանրապետության դիտարկվող բոլոր քաղաքներում 2023 թ. սեպտեմբերին, օգոստոսի համեմատ, սպառողական գներն աճել են 0.6-1.0 տոկոսով, այդ թվում՝ համեմատաբար բարձր գնաճ արձանագրվել է Գյումրիի և Հրազդան քաղաքներում: Մայրաքաղաքում սպառողական գներն աճել են 0.9 տոկոսով:

Հանրապետությունում 2023 թ. սեպտեմբերին, 2022 թ. սեպտեմբերի համեմատ, արձանագրվել է սննդամթերքի եւ ոչ ալկոհոլային խմիչքի 3.1 տոկոս գնանկում, իսկ 2023 թ. օգոստոսի համեմատ՝ 1.4 տոկոս գնաճ:

Հանրապետության դիտարկվող բոլոր քաղաքներում 2023 թ. սեպտեմբերին, օգոստոսի համեմատ, սննդամթերքի եւ ոչ ալկոհոլային խմիչքի գներն աճել են 1.0-1.7 տոկոսով (գնաճի ամենաբարձր ցուցանիշն արձանագրվել է Եղեգնաձոր քաղաքում): Մայրաքաղաքում սննդամթերքի եւ ոչ ալկոհոլային խմիչքի գներն աճել են 1.5 տոկոսով:

Անցած տարվա սեպտեմբերի համեմատ՝ 2023 թվականի նույն ժամանակահատվածում խոզի մսի գինը նվազել է 14.2 տոկոսով, ոչխարինը՝ 2.7 տոկոսով, թռչնամսինը՝ 0.2 տոկոսով:

Նախորդ ամսվա համեմատ՝ սեպտեմբերին խոզի, ոչխարի մսի եւ թռչնամսի գները նվազել են համապատասխանաբար 1.2 տոկոսով, 1.4 տոկոսով եւ 0.4 տոկոսով:

Տավարի մսի գինն այս տարվա սեպտեմբերին, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, աճել է 2.2 տոկոսով, իսկ 2023 թ. օգոստոսի համեմատ՝ արձանագրվել է 0.3 տոկոս գնանկում:

Բանջարեղենի ապրանքախմբում 2023 թ. սեպտեմբերին, 2022 թ. սեպտեմբերի համեմատ, արձանագրվել է 6.6%, իսկ 2023 թ. օգոստոսի համեմատ՝ 14.9% գնաճ:

2023 թ. սեպտեմբերին, նախորդ ամսվա համեմատ, մրգի եւ բանջարեղենի ապրանքախմբերի միջին կշռված գնաճը կազմել է 9.45 տոկոս:

Այս եւ մի շարք այլ ապրանքախմբեր, սպառողական զամբյուղում ունենալով 9.38% տեսակարար կշիռ, նշված ժամանակահատվածում նպաստել են սպառողական գների ընդհանուր մակարդակի աճին 0.89 տոկոսային կետով:

2023 թ. սեպտեմբերին, 2022 թ. սեպտեմբերի համեմատ, ոչ պարենային մակարդակը մնացել է անփոփոխ, իսկ 2023 թ. օգոստոսի համեմատ՝ արձանագրվել է 0.6% գնաճ:

ԲԵՆՁԻՆ

ՈՐԻՆ Է ԹԱՆԿԱՑՄԱՆ ՊԱՏՃԱՌԸ

«Շողովուրդ» օրաթերթը երեկ գրել էր, որ Հայաստանում բենզինը եւ հեղուկ գազը բարձրացում են ինքնենթիվ կերպով թանկանալ: Ճակխին 350 դրամով մեկ լիտր բենզինը զսննելն այսօր արդեն երազանք է: Մասնավորապես, Ռեգուլյար սեսակի բենզինը դարձել է 550 դրամ, Պրեմիումը՝ 580 դրամ, Սուպերը՝ 750 դրամ:



Ուե իսկ հեղուկ գազը, նախկին 100 դրամի փոխարեն, այսօր արժե 180 դրամ: Շարունակաբար թանկացումների այս ֆոնին արժեզրկվում է դրամն ու թանկանում ռուբլին, եվրոն ու դոլարը: Իսկ ինչպե՞ս պետք է վճարի միջին վիճակագրական քաղաքացին:

«Շողովուրդ» օրաթերթը փորձել էր կապ հաստատել Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի՝ հասկանալու համար, թե ինչի հետ են կապված այս աստիճան թանկացումները, սակայն մեր զանգերն ու հարցերը մնացել էին անպատասխան:

Ավելի ուշ արդեն ՄՊՀ-ն հանդես է գալիս հրապարակային հայտարարությամբ, որում, մասնավորապես, ասված է.

«Մրցակցության պաշտպանության հանձնաժողովը մշտապես ուշադրության կենտրոնում է պահում բենզինի շուկայում տեղի ունեցող գնային տատանումները: Նշենք, որ բենզինի գնազույացումը պայմանավորված է մի շարք հանգամանքներով, մասնավորապես՝ միջազգային շուկաներում տեղի ունեցող բենզինի գների փոփոխություններով, արտարժույթի տատանումներով, ինչպես նաեւ տեղափոխման ծախսերով եւ այլն: Հանձնաժողովի ուսումնասիրությունները ցույց են տվել, որ

2023 թվականի հունվարին 1 լիտր Ռեգուլյար տեսակի բենզինի ներմուծման միջին գինը կազմել է 0,41 ցենտ, իսկ սեպտեմբերին՝ 0,8 ցենտ:

Բացի այդ, 2023 թվականի հունվարին փոխարժեքը եղել է միջինում 390 դրամ, իսկ հոկտեմբերին միջինում կազմել է 414 դրամ: Վերոգրյալից ելնելով՝ կարող ենք փաստել, որ բենզինի գնի բարձրացումը պայմանավորված է եւ՝ ներմուծման գնի բարձրացմամբ, եւ՝ դոլարի փոխարժեքի որոշակի աճով:

Նշենք նաեւ, որ բենզինի գները, վերոգրյալ գործոններով պայմանավորված, մշտապես տատանվում են, եւ 2022 թվականին հունվար-օգոստոս ամիսներին Ռեգուլյար տեսակի բենզինի գինը տատանվել է 500-520 դրամի սահմաններում, իսկ Պրեմիում տեսակինը՝ 520-540 դրամի սահմաններում:

Մինչդեռ, 2023 թվականի հունվար-մայիս ամիսներին, պայմանավորված ներմուծման ցածր գնով եւ դրամի արժեու-

մամբ, Ռեգուլյար տեսակի բենզինի գինը տատանվել է 320-350 դրամի սահմաններում, իսկ Պրեմիումինը՝ 350-370:

Այսպիսով, միջազգային շուկաներում բենզինի գների, այդ թվում՝ դոլարի փոխարժեքի փոփոխություններով պայմանավորված՝ բենզինի շուկայում մշտապես տեղի են ունենում տատանումներ, որի արդյունքում շուկայում որոշ ամիսներին կարող են լինել համեմատաբար ցածր գներ, իսկ որոշ ամիսներին՝ բարձր:

Նշենք նաեւ, որ հանձնաժողովը պարբերաբար դիտարկում է բենզինի գնի վրա ազդող գործոնները եւ գների տատանումների համարժեքությունը մրցակցության օրենսդրության խախտումներ բացահայտելու դեպքում հարուցվում են վարույթներ:

Հավելենք, որ հոկտեմբերի 5-ի դրությամբ դոլարի փոխարժեքը կտրուկ նվազել է: Տատանումը կազմել է մինչեւ 23 դրամ: Հետագայում՝ այսօրոց բենզինի գինը սորից կիջնի այս ֆոնին:

ՄԱՌԻԱՍ ՂԱԶԱՐՅԱՆ

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՅՈՒՄ

«Բի Եւ Ռի» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպիչ) «ԵՐԵՎԱՆԻ ԱՌՐԱՆՔԱՅԻՆ ԲՈՐՍԱ» ՍՊԸ-ի հարթակում իրականացնելու է բաց աճուրդ համապատասխան փուլերով՝ «դասակակ» (գնի բարձրացմամբ), այսուհետեւ՝ «հողանդակակ» (գնի նվազեցմամբ) եղանակներով: Աճուրդի ընթացքում վաճառվելու են «Հայրիզենտակակ» ՓԲԸ-ին (այսուհետ՝ բանկ) սեփականության իրավունքով պատկանող հետեյալ կոտերը.

Լոտ 1 - Գեղարքունիքի մարզ, համայնք Սեան, գյուղ Շովագյուղ, Սեան-Ճամբարակ խճուղի 6,3 կմ, թիվ 1 հանգստյան տուն հասցեում գտնվող 3525,18 քմ վարչական շենք, 50 քմ ենթակայան, 179,2 քմ հարթակ եւ 5,4925 հա վարձակալության իրավունքով հողամաս (հողամասի վարձակալության պայմանագիր գործում է մինչեւ 20.08.2044թ.): Լոտի մեկնարկային գինը՝ 1200000000 ՀՀ դրամ:

Լոտ 2 - ք. Երեւան, Աջափնյակ, Մ. Մազմանյան փողոց, 8 շենք, 32 հասցեում գտնվող 76,3 քմ բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 370000000 ՀՀ դրամ:

Լոտ 3 - ք. Երեւան, Աջափնյակ, Մ. Մազմանյան փողոց, 6/3 հասցեում գտնվող 33,1 քմ պահեստ, 7,8 քմ մուտք, 23,1 քմ ծածկ, 5,7 քմ /11,4 խմ/ պարիսպ եւ 0,01236 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 195000000 ՀՀ դրամ:

Լոտ 4 - ք. Երեւան, Կենտրոն, Տերյան փողոց, 1/1 շենք, 21 հասցեում գտնվող 202,1 քմ շինություն: Լոտի մեկնարկային գինը՝ 273000000 ՀՀ դրամ:

Լոտ 5 - Կոտայքի մարզ, համայնք Արինջ, 22-րդ փողոց, 10 հասցեում գտնվող 429,93 քմ բնակելի տուն, 27,2 քմ ավտոտնակ, 3,55 քմ կաթսայատուն, 44,6 քմ անասնաշենք եւ 0,0687 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 800000000 ՀՀ դրամ:

Լոտ 6 - վաճառքը որպես մեկ ամբողջական համալիր՝ 540000000 ՀՀ դրամ մեկնարկային գնով, այդ թվում՝

6.1 - ք. Երեւան, Ավան, Մ. Բաբաջանյան փողոց, 7/18 հասցեում գտնվող 684,4 քմ պարկազ, 721,4 քմ ինքնակամ կառուցված շինություններ եւ 0,172576 հա հողամաս: Մեկնարկային գինը՝ 2800000000 ՀՀ դրամ:

6.2 - ք. Երեւան, Ավան, Մարշալ Բաբաջանյան փողոց, 39/10 հասցեում գտնվող 477,4 քմ արտարձան, 14,3 քմ օժանդակ շինություն, 9 քմ հարթակ, 2,9 քմ /7,25 խմ/ պարիսպ եւ 0,113625 հա հողամաս: Մեկնարկային գինը՝ 1962000000 ՀՀ դրամ:

6.3 - ք. Երեւան, Ավան, Մ. Բաբաջանյան փողոց, 7/18 եւ 39/10 հասցեներում գտնվող շարժական գույք:

Մակարոն արտարժույթի հոսքագիծ UNIVERSAL 94 (1 հատ), մակարոն արտարժույթի հոսքագիծ MEGA-4 (1 հատ), մակարոնի չորացման սայլակներ (22 հատ), մակարոնի փաթեթավորման սարք (1 հատ), մակարոն արտարժույթի ինքնաշեն սարք (1 հատ), մակարոն արտարժույթի սարք (1 հատ), մետաղյա պահոց (4 հատ), ջեռուցման համակարգ ապամոնտաժված (1 համալիր), կոմբիլեր արտարժույթի սարք /կմայս/ (1 հատ), մակարոնի չորացման մաղեր (540 հատ), փայտյա պողոթն (110 հատ), ամբարձիչ /ավտոմատ արձիչ/ (1 հատ), ցորենի խառնիչ-ամբարձիչ A1087 (1 հատ), պարկային խառնիչ-ամբարձիչ 30տ, GIFT CARTAL GKOM-3/GIFT CARTAL GK-12 (1 հատ), ինքնաշեն մաղ (1 հատ), պատրաստի արտարժույթի բունկեր (3 հատ), պատրաստի արտարժույթի պարկի լցման ինքնաշեն սարք (1 հատ), պատրաստի արտարժույթի 25տ (1 հատ), տեսախցիկ (3 հատ), օդորակիչ-հիթացի (1 հատ), մետաղյա տարողություն (3 հատ) : Մեկնարկային գինը՝ 638000000 ՀՀ դրամ:

Աճուրդի փուլերը՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցեում 23.10.2023թ.-ին, ժ. 12:00-ին դասական եղանակով, այնուհետեւ յուրաքանչյուր աշխատանքային օր, նույն վայրում, նույն ժամին՝ հողանկարային եղանակով: Աճուրդի ավարտը՝ 29.12.2023թ.-ին:

Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է համապատասխան գույքի ընթացիկ մեկնարկային գնի 1%-ի չափով, որի վճարման վերջնաժամկետը սահմանված է յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն: Նախավճարը վճարվում է «Բի Եւ Ռի» ՍՊԸ -ի դրամարկումնաճուրդի կայանում հասցեում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանխիկի շենք չզերագանցելու դեպքում, կամ բանկային հաշվին («Արդ-շինբանկ» ՓԲԸ-ում 2470103374150000 հաշվեհամարին), կամ կազմակերպչի կողմից տրված այլ հաշվեհամարին: Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական

անձանց համար՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթ եւ աճուրդի վկայական:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը: Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը:

Նախքան աճուրդի ավարտն աճուրդային լոտի նկատմամբ բանկի գրավի կամ սեփականության իրավունքի դադարման հետեւանքով աճուրդի մասնակցների կորուստների եւ վնասների համար բանկը որեւէ պատասխանատվություն չի կրում:

Լոտերն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են տույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի ավարտը, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 10:00-ից մինչեւ 18:00-ն, այցելել վերը նշված հասցեներով եւ ծանոթանալ լոտերի հետ՝ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի հետ: Հարկային գործակալ հանդիսանալու դեպքում աճուրդում հաղթած մասնակցի կողմից լոտի գնի վճարելու կարգը սահմանվում է վաճառողի հետ՝ փոխհամաձայնեցված ժամկետներում: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով: Աճուրդների անցկացման կանոնակարգին կարող էք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող էք զանգահարել (011) 56-45-13 հեռախոսահամարով կամ այցելել www.ilcbst.am, www.akson.am կայքեր:

«Շողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԿԱՐԾԻՔ

ՀՍՏԱԿԵՑԿԵՑ

ԱՇԽԱՐՀԻ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ԵՐԵՎԱՆՈՒՄ

2023թ. նոյեմբերի 21-ից դեկտեմբերի 5-ը Երևանը կընդունի բռնցքամարտի աշխարհի դասանեկան առաջնությունը: Մրցաարին 15-16 ամսական բռնցքամարտիկներ կմասնակցեն ռադիո և աղջիկների 13-ական բաժանին կարգերում:

Բռնցքամարտի միջազգային ֆեդերացիան հայտնում է, որ IBA օրացույցում աշխարհի պատանեկան առաջնություն է գրանցվել 8 տարվա դարձարից հետո: Պատանիների վերջին մրցումներն անցկացվել են 2015 թվականին Սանկտ Պետերբուրգում, իսկ աղջիկներին՝ չինական Թայբեյում: Այս անգամ մրցաշարը կանցկացվի համատեղ ձեռնարկով:

IBA-ի նախագահ Ումար Կրեմլյովը շնորհակալություն է հայտնել Հայաստանի բռնցքամարտի ֆեդերացիային շարունակական աջակցության համար և վստահություն հայտնել, որ միջոցառումը կանցկացվի բարձր մակարդակով:

«Երեւանն արդեն մի քանի մասշտաբային միջոցառումներ է հյուրընկալել, և մենք միանգամայն վստահ ենք, որ աշխարհի պատանեկան առաջնությունը կանցկացվի բացառիկ չափանիշներով», - ասել է Ումար Կրեմլյովը:

Նշենք՝ բռնցքամարտի աշխարհի պատանեկան առաջնությունը կանցկացվի նախկին «Միկա» մարզահամալիրում:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ Կարեն Գիլոյանն ավելի վաղ հայտնել էր, որ Հայաստանը պատանեկան ԱՄ-ն անցկացնելու հայտ է ներկայացրել՝ հաշվի առնելով, որ այդ տարիքային խմբում արդեն իսկ լավ ձեռավորված հավաքական ունենք:

«Մեր պատանի բռնցքամարտիկները սկսել են լուրջ արդյունքներ ցույց տալ:



Մասնագետների կարծիքով՝ նրանց շրջանում ապագա շատ լուրջ բռնցքամարտիկներ կան: Այս ամենը հաշվի առնելով՝ Հայաստանի բռնցքամարտի ֆեդերացիայի հետ որոշեցինք հայտ ներկայացնել, որն էլ բավարարվեց», - ասել է ԿԳՄՍ նախարարի տեղակալը:

Այս տարվա ապրիլին Երեւանում անցկացվել էր Եվրոպայի երիտասարդների առաջնությունը, որի արդյունքներով՝ Հայաստանի թիմը 1 ոսկե, 2 արծաթե ու 10 բրոնզե մեդալ էր նվաճել:

Ավելի վաղ հայ պատանի բռնցքամարտիկները նաեւ 2 ոսկե և 7 արծաթե մեդալ էին նվաճել Ռուսիայի մայրաքաղաք

Բուխարեստում ավարտված պատանիների Եվրոպայի առաջնությունում: Հիշեցնենք՝ Երեւանում 2022 թվականին առաջին անգամ անցկացվել է բռնցքամարտի մեծահասակների Եվրոպայի առաջնությունը:

Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամալիրում համալիրում անցկացված առաջնությունում Հայաստանի ներկայացուցիչներից չեմպիոնի կոչմանն արժանացել էր Հովհաննես Բաջկովը (63,5 կգ), փոխչեմպիոններ էին դարձել Արթուր Բազեյանն (57 կգ) ու Ռաֆայել Հովհաննիսյանը (86 կգ, իսկ Նարեկ Մանասյանը (92 կգ) դարձել էր բրոնզե մեդալակիր:

ՍՊՈՐՏ

100-ՐԳ ՀԱՆԳԻՊՈՒՄԸ

Չավին 100-րդ հանդիպումն անցկացրեց «Բարսելոնայի» գլխավոր մարզչի պաշտոնում Չեմպիոնների լիգայի խմբային մրցաշարի երկրորդ տուրի խաղում 1:0 հաշվով հաղթելով պորտուգալական «Պորտուին»:

Իսպանացի մասնագետը «Բարսելոնան» գլխավորել է 2021թ. նոյեմբերին: Նրա ղեկավարությամբ կատալոնական թիմը 100 խաղում ունեցել է 64 հաղթանակ, 17 ոչ-ոքի, 19 պարտություն:

Չավին «Բարսելոնայի» պատմության մեջ 11-րդ գլխավոր մարզիչն է, որն անցկացնում է 100 հանդիպում. հաղորդում է Opta-ն:

Անցած մրցաշրջանում «Բարսելոնան» նվաճեց Իսպանիայի չեմպիոնի տիտղոսը՝ երկրորդ ետղը գրաված «Ռեալին» գերազանցելով 10 միավոր:

ԳՎԱՐԴԻՈՒՄՅՈՒՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ

Անգլիայի չեմպիոն, գավաթակիր, Չեմպիոնների լիգայի գավաթակիր, Եվրոպայի տուայերգավաթակիր «Մանչեսթեր Սիթիի» կատալոնացի գլխավոր մարզիչ Խոսեպ Գվարդիոլան մեկնաբանել է 3:1 հաշվով հաղթանակը գերմանական «Լայպցիգի» նկատմամբ Չեմպիոնների լիգայի խմբային մրցաշարի երկրորդ տուրի խաղում:

«Հրաշալի խաղացինք երկու պարտություններից հետո և հասանք հաղթանակի Լայպցիգում: Նախորդ երկու հանդիպումները լավ չէին դասավորվել, քանի որ հեշտ չէ խաղալ տուգանային հրապարակում 10 ֆուտբոլիստներով պաշտպանվող թիմերի դեմ: Սրության պակաս ունեինք այդ հանդիպումներում, բայց ես լիովին վստահում եմ իմ ֆուտբոլիստներին:

«Լայպցիգի» դեմ բոլոր խաղացողները կատարյալ էին: Այո, երկու կամ երեք անցում բաց թողեցինք մեր դարպասի մոտ, բայց խաղը մեր վերահսկողության տակ էր», - Գվարդիոլայի խոսքը մեջբերում է BBC-ն:

ՀԱՆԳԻՊՈՒՄՆԵՐԻ ԱՐԳՅՈՒՆՔՆԵՐ

Ֆուտբոլի Չեմպիոնների լիգայում կայացել են E, F, G, H խմբերի երկրորդ տուրի հանդիպումները:

«Ժողովուրդ» օրաթերթի հաղորդմամբ՝ E խմբում «Սելթիկ»-ը, տանն ընդունելով «Լացիո»-ին, զիջել է 1:2 հաշվով, «Ատլետիկո»-ն առավելության է հասել «Ֆլեյտնորդ»-ի նկատմամբ (3:2):

F խմբում ՊՍԺ-ն պարտվել է «Նյուքասլ Յունայթեդ»-ին 4:1 հաշվով, «Բորուսիա»- «Միլան» հանդիպումն ավարտվել է ոչ-ոքի՝ 0:0:

G խմբում «Մանչեսթեր Սիթի»-ն հյուրընկալվելիս 1:3 հաշվով հաղթել է «Լայպցիգ»-ին, «Յուվենտա Զվոլդա»- «Յանգ Բոյզ» խաղն ավարտվել է ոչ-ոքի՝ 2:2:

H խմբում «Բարսելոնա»-ն նվաճագույն հաշվով հաղթել է «Պորտու»-ին, «Ատլետիկո»-ն էլ 2:3 հաշվով զիջել է Ռոստովի «Շախտյոր»-ին:

ՀԵՏԱՔՐՈՔԻ

ՇՊՈՒՍԸ՝ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Երգչուհի Շպոտոը Հայաստանում է: Նա ինտերգրամայն իր էջում հրապարակել է տեսանյութ, որին կից գրել է. «Պատրաստվում եմ գնալ Անաիս Սարգսյանի մոտ: Գնումներ կատարեցինք արցախահայության համար: 90.984 դրամի սնունդ և ինամքի պարագաներ: Շնորհակալություն բոլոր կամավորներին, դուք հրաշք եք»:

Նշենք, որ դերասանուհի Անաիս Սարգսյանը ինչպես 44-օրյա պատերազմի ընթացքում, այնպես էլ այս պահին կամավորների, իր թիմի և նվիրատուների ջանքերով օգնություն է տրամադրում մեր հայրենակիցներին:

Հավելենք, որ մինչ այս մեծաքանակ օգույթներ է տրամադրել ամրիկահայ երգչուհի Լիլոն, ռուսաստանաբնակ երգիչ Արկարի Դումիկյանը, Ռազվիլ Ամյանը և այլք:

ԼՅՈՎԱՅԻ ԱՆԳՐԱԳԱՐՉԸ

Վալերի Ղազարյանը՝ ռեփեր Լյովան, ինտերգրամայն իր էջում անդրադարձել է Արցախի նախկին նախագահների ձերբակալությանը Ադրբեջանի կողմից. «Նենց չի՝ աչքիս լույսն է, գիտեմ, որ ամենամեծ մեղավորների ցանկում ինքը իր ու-



րույն տեղն ունի, ոնց պաշտոնյաների մեծ մասը: Շատ բան գիտեմ, բայց մի տեսակ սիրտս ցավում է, որ սենց տեսնում եմ ոնց են չուլի տեղ տշում աշ ու ձախ, վերջիվերջո հայ է, հայրենակից է, հա, դավաճան է, առեւտրական է, խաբեբա է, ծախել է, բայց հայ է, չէ՛: Այս քայլով ոչ թե Արալիկին, Բակոյին, Դավիդին կամ Ռուբենին են անպատվում, այլ ամբողջ Հայաստանին. հայ է, չէ՛: Պետք է ամեն ինչ անել, դուրս բերել սրանց ադրբեջանական բանտերից, բերել Հայաստան, ստեղ մեր ուզած ու իմացած ձեւերով դատենք, բայց մենք անենք, հայը անի, ոչ թե ադրբեջանցին», - գրել է Լյովան՝ տեղադրելով Արալիկի Հա-

րությունյանի՝ Ադրբեջանի կողմից ձերբակալության կարգերը:

Հիշեցնենք, որ Լյովան մշտապես առանձնացել է իշխանությունների նկատմամբ իր քննադատական դիրքորոշմամբ:

Վերջին շրջանում նրա անձի շուրջ բռուն քննարկումներ էր սկսվել այն բանից հետո հատկապես, երբ ՀՀ կառավարությունը նրան էր վստահել Սևուհի Դոզի՝ Երեւանում կայանալիք համերգի բացումը, որի մասին ռեփերը հայտնել էր ինտերգրամայն իր էջում: Ավելի ուշ համերգը հետաձգվեց, որի մասին «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր:

ՍՄՐԻՍ ՂԱԶԱՐՅԱՆ

● Հոկտեմբերի 7-ին Երեւանի Հ. Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոնում տեղի կունենա «Չառ» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 2000-5000 դրամ: Սկիզբը՝ ժամը 19:00-ին:



Էջը՝ ՄԱՐԻԱՍ ՂԱԶԱՐՅԱՆԻ

ՎԵՐԱՅՍԿՈՒՄ

ՀԱՐՑ. Ո՞վ է զբաղվում դոլիեթիլենային տոդրակների արգելի վերահսկմամբ:
Տիգրան Ավետիսյան (39 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ. 2022 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ մտած՝ առեւտրի իրականացման վայրերում եւ առեւտրի օբյեկտներում մինչեւ 50 միկրոն խտությամբ պոլիէթիլենային պարկերի եւ տոպրակների վաճառքի եւ իրացման արգելքի դրույթի նկատմամբ Շուկայի վերահսկողության տեսչական մարմինը չի իրականացնում վերահսկողական գործառնություններ:

Շուկայի վերահսկողության տեսչական մարմին

«ԺՐՂՈՎՈՒՐԳ». Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 219-րդ հոդվածի համաձայն՝ արգելվող ապրանքներ վաճառելու (իրացնելու) նկատմամբ վերահսկողությունը վերապահված է տեղական ինքնակառավարման մարմիններին:

ՎԱՐՈՒՅՑ

ՀԱՐՑ. Կասարողական վարույթ հարուցվելուց հետո ինչքան ժամանակ ունենա դատարանները կամովին կասարելու համար:
Ղալիթ Շարոյան (38 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ. Հարկադիր կատարողը պարտավոր է ահմանված կարգով կատարողական վարույթ հարուցելուց հետո իրականացնել պարտապանի գույքի բռնագանձմանն ուղղված կատարողական գործողություններ, այդ թվում՝ արգելանք դնել պարտապանի գույքի վրա, այն առգրավել եւ իրացնել:

Պարտապանն իրավունք ունի կատարման ենթակա ակտի պահանջը կամովին կատարել մինչեւ այն հարկադիր կատարման ներկայացվելը, իսկ հարկադիր կատարման փուլում պարտավորության կամավոր կատարման ժամկետ օրենքը չի նախատեսում:

Հարկադիր կատարումն ապահովող ծառայություն

«ԺՐՂՈՎՈՒՐԳ». Նշված հանգամանքն արգելք չէ կատարողական վարույթի ցանկացած փուլում պարտապանի կողմից պարտավորությունը կամովին կատարելու համար:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից



Գրանադայում կարճ զրույց է տեղի ունեցել ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի եւ Ուկրաինայի Նախագահ Վլադիմիր Զելենսկիի միջեւ:

Հիշեցնենք, որ Փաշինյանի գլխավորած պատվիրակությունը մեկնել է Գրանադա՝ մասնակցելու Եվրոպական քաղաքական համայնքի գագաթնաժողովին: Հայկական պատվիրակության կազմում է նաեւ արտաքին գործերի նախարարը եւ Անվտանգության խորհրդի քարտուղարը:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը
Բաժանորդագրվելու
համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ. 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:



Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (010 54-64-23 հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ

հայկական տպագիր մամուլից


«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետևյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
 Ազգանուն՝ _____
 Առաքման հասցե՝ _____
 Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝ (060) 490049
 0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ



| | | | | | |
|--|-----------------------|----------------------|--|-----------------------|----------------------|
| | Շիրակ | + 1 + 3 +12 + 16 | | Արարատ | +7 + 10 +20 + 22 |
| | Կոտայքի լեռներ | + 1 + 3 +10 + 14 | | Արմավիր | +7 + 10 +20 + 22 |
| | Կոտայքի նախալեռներ | + 4 + 6 +16 + 18 | | Վայոց ձորի լեռներ | + 1 + 3 +7 + 10 |
| | Գեղարքունիք | + 1 + 3 +10 + 14 | | Վայոց ձորի նախալեռներ | + 6 + 10 +15 + 18 |
| | Լոռի | + 4 + 6 +14 + 17 | | Սյունիքի հովիտներ | +10 + 12 +16 + 19 |
| | Տավուշ | + 7 + 11 +16 + 19 | | Սյունիքի նախալեռներ | +10 + 12 +15 + 19 |
| | Արագածոտնի լեռներ | + 1 + 4 + 7 + 11 | | ԼՂՀ | + 7 + 10 +17 + 20 |
| | Արագածոտնի նախալեռներ | + 4 + 7 +15 + 19 | | Երեւան | +10 + 12 +17 + 19 |

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
 Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22^ա/3, հեռ.՝ 010 54-64-23
 Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
 տրված է 24.11.2010
 Ստորագրված է տպագրության 5.10.2023

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆՂ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
 խմբագրություն հանձնված նյութերը չեն գրայնաչափում եւ չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետևյալ նախադասությունը. «Շարունակությունը կարող էք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»: